

Թաղային կոիւններն երբեմն յերեւան կու գան եւ քանի մը շաբաթներ պտըտելէն ետքը աներեւոյթ կ'ըլլան, վերստին երեւնալու համար:

Թաղեցւոյն մեծ մասն անհոգ է եկեղեցւոյ եւ վարժարանի մասին. երիտասարդութիւնն երբեմն կաշխատի, որ բարեկարգութիւն մտցունէ վարժարանին եւ թաղականին մէջ. սակայն բարեկարգութիւնն առանց դրամի չըլլար, եւ մեր երիտասարդութիւնն ալ դժբախտաբար առանց դրամի կ'ըլլայ:

Նաւավարներ եւ ձկնորսներ առատ են: Ասոնք սքանչելի գինի կ'իւմեն եւ պատուական ալ ձուկ կ'ուտեն գինւոյ վրայ: Նախանձ եւ ատելութիւն չկայ իրարու մէջ. ամենքը սիրով կը վարուին միմեանց հետ, եւ միշտ այսպէս սիրով մնալու համար ուխտ ըրած են, որ չխօսին թաղային խնդիրներու վրայ, որոնցմէ, կ'ըսեն, միշտ վնասուած է իրենց բարեկամութիւնը:

Կիները տան գործերով կգբաղին. քիչով գոհ կ'ըլլան եւ մեծ պահանջումներ չեն ըներ: Պարկէշտ եւ հաւատարիմ են, բայց կգտնուին հարկաւ *այնպիսուհիներ* ալ, որք իրենց ամուսիններէն երբեմն ապտակ կ'ուտեն՝ ընդդիմախօս գտնուելուն համար:

Պէյքօղին օդն ալ միշտ գովեստներով կ'յիշուի... ընդհանրապէս ամեն թաղին օդը, որչափ ալ գէշ ըլլայ՝ միշտ այն թաղին վարժարանէն լաւ է:

ԼԲ.

ՍԱՔՐԻ ԳԻՒՂ

Այս գիւղին մէջ միշտ փափագ մը կը տեսնուի յառաջադիմութեան, բայց յառաջադիմութիւն բնաւ չտեսնուիր:

Տասը տարիէ հետէ ամեն ջանք ի գործ կ'դնեն իրենց վարժարանը բարեկարգելու համար, սակայն վարժարանը բարեկարգութեան երես չտեսներ: Այս օրերս վարժարանի հոգաբարձութիւնը հրաժարական տուաւ իւր պաշտօնէն, գոր ուրիշներն ստանձնել կ'ուզեն եւ չեն յաջողիր: Վարժարանը բարեկարգելէն առաջ թաղեցւոյն սիրտը բարեկարգելու պէտք կայ:

Եկեղեցասիրութիւնն հագուագիւտ է թաղիս մէջ. ժամկոչը ուրիշ թաղերէն մարդ կը կանչէ եկեղեցւոյն:

Բնիկ գեղացին արհեստաւոր է եւ վարժարանի վերաբերեալ խօսքերուն մէջ բնաւ չխառնուիր: Կգտնուին հոս վաճառականներ, որք